



# Ռաֆֆի

## Հայաստրի ողբ

Քանի տարի է, Հայրենիք սիրուն,  
Դառն ցավերովդ եղել եմ ջունուն.  
Մար ու ձոր ընկած իբր խենթ մաջնուն.  
Վեր առ զքնարդ մուսայդ դյուցագուն.  
Ողբամք Հայաստան, ափսո՛ւ Հայաստան:  
Մըթնեցավ հայոց պայծառ լուսատուն,  
Խեթիվ հայեցավ Ակրն գերաբուն.  
Միշտ այդպես ձմեռ, ե՞րբ հապա գարուն.  
Արի նըստենք լամբ, ո՛վ Հայ իմաստուն: Ողբամք Հայաս.:  
Վախում եմ մի օր անտեր՝ անպաշտպան,  
Մեռնի այս հիվանդը, ո՛չ դեղ, ո՛չ դարման,  
Ու այնպես կորչի ազգըն աննըման,  
Մեզ մնում է սուգ ո՛վ Հայ գիտնական: Ողբամք Հայաս.:  
Եկեք ի հանդես, սգավոր տեսարան.  
Ո՛վ մեծրդ Ներսես, Սահակ Պարթևյան,  
Մեսրոպյ և Մովսես արփիք Թորգոմյան.  
Եկեք երջանիկ Հարքրդ սրբազան: Ողբամք Հայաս.:  
Չը կան ազգասեր նախնի իշխաններ,  
Ցրված է հոտը, չկան ժողովներ,  
Հավատն է միայն, ոչ միություն, ոչ սեր,  
Լեր դու ողբակից, ով Խորենյան ծեր: Ողբամք Հայաս.:  
Հայաստանի մեջ գանազան ազգեր,  
Յուր խեղճ որդիքը պանդուխտ ու անտեր,

Քաղաքք ու ավանք անբընակ, ավեր,  
Ավերակ ու անշեն են հայոց տներ: Որքանք Հայաս.:  
Ինչո՞ւ դու այդպես ո՛վ վերին տնտես,  
Հայոց խեղճ ազգը արեցիր անտես.  
Ե՛րբ արդյոք մեզ դու լույս պիտի ծագես,  
Ե՛րբ բարի իշխան մեզ պիտի կարգես: Կանգնյա Հայաս.:  
Մի՛ թողուր, մի՛ թողուր ավեր Հայաստան,  
Հարո՛ւ դու կրկին զազգըն անկենդան.  
Լուր մեզ դու, լուր մեզ փրկիչ բարեխնամ,  
Փայլեցո՛ւ կրկին փառքն Արարատյան,  
Կանգնյա զՀայաստան, ափսո՛ւս Հայաստան: